ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2014 թվականի թիվ 12/16

քաղ. Մինսկ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 11/21 «ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Ի գիտություն ընդունել նույնականացման միջոցները դնելու մասին հարցի մշակման մասով անցկացվող աշխատանքի մասին Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացվող տեղեկատվությունը:

2. Կողմերին՝ շարունակել ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների բեռնախցերի վրա նույնականացման միջոցների դնելն ապահովելու մասին որոշակի պետությունների հետ միջազգային երկկողմ պայմանագրեր կնքելու մասով հարցի մշակումը:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ 2015 թվականի երկրորդ եռամսյակում միմյանց տեղեկացնել սույն Որոշման 2-րդ կետում նշված աշխատանքի արդյունքների մասին:

4. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ մինչև սույն Որոշման 2-րդ կետում նշված պայմանավորվածություններն իրագործելը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման ընթացքում դրանք տրանսպորտային միջոցի բեռնասրահներից հանելու (կամ դրանց մեջ դնելու) հնարավորությունը բացառելու նպատակով՝ ՄՄ ՄՕ-ի 221-րդ հոդվածի դրույթների պահպանմամբ ապահովել՝ առանց մաքսային նույնականացման միջոցները բացելու կամ վնասելու տեսանելի հետքեր թողնելու տրանսպորտային միջոցի բեռնասրահներից ապրանքները հանելու (կամ դրանց մեջ դնելու) հնարավորությունը բացառող՝ ՄՄ ՄՕ-ի 109-րդ հոդվածով նախատեսված՝ ապրանքների նույնականացման եղանակի կիրառումը՝ անկախ մաքսային հսկողության ձևերի կիրառումից:

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Ա. Ֆ. Շպիլևսկի

Նախագահի տեղակալ՝ Գ. Կ. Ամրին